ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 51/11

Քաղ.Երեւան **23 նոյեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. նոյեմբերի 23-ի նիստում (արձանագրություն N 7.5) քննարկեց «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության կողմից 2011թ. նոյեմբերի 2-ին ներկայացված «Cherry Sweets Chery» (հայտի համարը՝ N 1035365) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, համաձայն որի «Cherry Sweets Chery» (միջազգային հայտ N 1035365) ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ բաղկացած է «ХАРЪКОВ», «BUSCUIT», «CHOCOLATE», «ЦУКЕРКИ», «CHERRY», «КОНФЕТЫ CHERRY», «SWEETS CHERRY» գրառումներից, որոնք չունեն տարբերակիչ հատկություն և նշում են ապրանքի աշխարհագրական ծագումը ու ապրանքի տեսակը:

Բողոքում նշված է, որ հայտատուն հայտնում է իր համաձայնությունը, որ հայտարկված նշանում «ХАРЪКОВ», «BUSCUIT», «CHOCOLATE», «ЦУКЕРКИ», «CHERRY», «КОНФЕТЫ CHERRY», «SWEETS CHERRY» ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն և հրաժարվում է դրանց նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից:

Սակայն, հայտատուն համաձայն չէ փորձաքննության այն որոշման հետ, որ նշանն ամբողջությամբ ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

Բողոքարկողը նշում է, որ հայտարկված նշանը չի կարող դիտարկվել որպես ամբողջությամբ տարբերակիչ հատկություն չունեցող, քանի որ իրենից ներկայացնում է յուրինակ համակցված ապրանքային նշան, որը նաև ներառում է հայտատու-ընկերության ֆիրմային

լոգոտիպը՝ գրանցված Հայաստանում որպես ապրանքային նշան: Ավելին, Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված ապրանքային նշանի օգտագործման գործոնը նաև նշում է այն, որ հայտարկված նշանն օժտված է տարբերակիչ հատկությամբ և որ այն սպառողի մոտ զուգակցվում է հենց հայտատու-ընկերության արտադրանքի հետ:

Բողոքում նշված է, որ հայտարկված նշանը ունի հրուշակեղենի ինքնատիպ փաթեթավորում, որոնք նույնպես ներկայացված են Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչի արդյունքում կարելի է եզրակցնել, որ հայտարկված նշանն ամբողջությամբ ձեռք է բերել տարբերակիչ հատկություն, մասնավորապես, որպես հայտատուի ապրանքային նշան և սպառողի մոտ կասոցացվի հայտատու-ընկերության հետ: Ավելին, այդ փաթեթավորման վրա առկա է ընկերության ֆիրմային լոգոտիպը, որը գրանցվել է որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետության տարածքում, որը նույնպես փաստում է այն մասին, որ հայտարկված նշանն ամբողջությամբ ենթակա է պաշտպանության և չի կարող դիտարկվել որպես տարբերակիչ հատկություն չունեցող:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. նոյեմբերի 2-ին «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության կողմից բողոք է ներկայացվել «Cherry Sweets Chery» (հայտի համարը՝ N 1035365) միջազգային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

Նշվեց, որ մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, համաձայն որի ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ բաղկացած է այնպիսի գրառումներից, որոնք չունեն տարբերակիչ հատկություն:

Նշվեց նաև, որ հայտարկված նշանը ունի հրուշակեղենի ինքնատիպ փաթեթավորում և ապրանքային նշանի վրա առկա է իրավատիրոջ մեկ այլ ապրանքային նշան (N 836606), որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության տարածքում: Կոլեգիան հայտնեց այն կարծիքը, որ ապրանքային նշանը կարելի է գրանցել՝ դիսկլամացիա անելով «ХАРЪКОВ», «BUSCUIT», «CHOCOLATE», «ЦУКЕРКИ», «CHERRY», «КОНФЕТЫ CHERRY», «SWEETS CHERRY» բառերը:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը ամբողջությամբ և բավարարել «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության բողոքը՝ գրանցելով «Cherry Sweets Chery» (հայտի համարը՝ N 1035365) համակցված ապրանքային նշանը 30-րդ դասի համար՝ դիսկլամացիա անելով «ХАРЪКОВ», «BUSCUIT», «CHOCOLATE», «ЦУКЕРКИ», «CHERRY», «КОНФЕТЫ CHERRY», «SWEETS CHERRY» բառերը:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան